

խեղճ կ'ապրի. այնպէս որ եթէ յիշեալ պորտուգալցի հայրերը չօգնէին իրեն իր թշուառութեան մէջ, պիտի չկարենար ինքզինքը պահպանել. որովհետեւ պատերազմի եւ ազէտին (տեղահանութեան) ժամանակ բոլոր ժամանակաւոր ինչքերն, ի մասնաւորի եկեղեցական զգեստները կորսնցուցած է. այնպէս որ Ս. Պատարագը մատուցանելու համար չունի կարեւոր զգեստները եւ ոչ այլ իրեր, որոնք կարենային անոնց տեղը լեցնել. այս պատճառաւ ալ կաթողիկոսն իւր եպիսկոպոսներու եւ քահանաներու հետ միասին վասն փառաց Աստուծոյ եւ ի փրկութիւն հասարակաց քրիստոնէից օգնութիւն կը խնդրէ Ձեր Սրբութենէն, որպէս զի կարենայ հայթհայթել եկեղեցական զգեստներ եւ ուրիշ կարեւոր սպասներ իւր եկեղեցւոյն համար: Կաթողիկոսը իւր հովուութեան տակ ունի 12.000 հայ քրիստոնեաներ, թէ Սպահանի մէջ եւ թէ յիշուած երկու վայրերու վրայ. այսպէս է հրամայուած Պարսից թագաւորէն. եւ Պարսից թագաւորին գրած նամակները առ Ձեր Սրբութիւն թէ ի՞նչ կը բովանդակէ, չենք գիտեր:

Ծանօթ է ուրիշ կողմէ ալ, թէ Դաւիթ կաթողիկոս դիմած է Պօղոս Ե. Քահանայապետին, հայցելու անոր պաշտպանութիւնն եւ միջնորդութիւնը Շահին քով (1605): Այս թղթակցութեան մասին կը գրէ Վարդան Յունանեան. «Դաւիթ կաթողիկոս իջմիածնի